



ՇՈՒԿԱՆԵՐ ԵՎ

ՄՐՑԱԿՑՈՒԹՅՈՒՆ

**ԹԱԹՈՒԼ ՄԿՐՏՉՅԱՆ**

ՀՊՏՀ գիտության գծով պրոռեկտոր,  
տնտեսագիտության դոկտոր, դոցենտ

**ՄԵԼԱՆՅԱ ՂԱՐԱԳՅՈՋՅԱՆ**

ՀՊՏՀ մակրոէկոնոմիկայի ամբիոնի դասախոս

**ՎԱԶԳԵՆ ՊՈՂՈՍՅԱՆ**

ՀՀ ԿԲ դրամավարկային քաղաքականության դեպարտամենտի  
տնտեսագետ, ՀՊՏՀ մակրոէկոնոմիկայի ամբիոնի ասպիրանտ


**ՑՈՐԵՆԻ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԳՆԵՐԻ  
ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆԸ ՊԱՅՄԱՆԱՎՈՐՈՂ  
ԳՈՐԾՈՆՆԵՐՆ ՈՒ ԴՐԱՆՑ  
ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ ՀՀ ՑՈՐԵՆԻ ԵՎ  
ԱԼՅՈՒՐԻ ՇՈՒԿԱՆԵՐԻ ՎՐԱ**

Հայաստանի Հանրապետությունը, լինելով փոքր, բաց տնտեսություն ունեցող երկիր, համաշխարհային ապրանքահումքային շուկաներում սակարկվող ապրանքների պարագայում աշխարհի երկրների ճնշող մեծամասնության նման հանդես է գալիս որպես «գին վերցնող»՝ չունենալով որևէ ազդեցություն դրանց նկատմամբ ձևավորվող պահանջարկի կամ դրանց առաջարկի վրա: Վերոնշյալը, իհարկե, տարածելի է նաև ցորենի պարագայում, որի գծով ՀՀ ներքին սպառումը մեծապես բավարարվում է ներմուծման հաշվին: Այս հանգամանքով պայմանավորված՝ օբյեկտիվ անհրաժեշտություն է առաջանում մշտապես ուսումնասիրելու ցորենի միջազգային շուկաների զարգացումներն ու գների տատանումները՝ որպես ներքին տնտեսությունում ցորենի, հետևաբար նաև՝ ալյուրի և հացի ինքնարժեքը ձևավորող բավական մեծ բաղադրիչ (որը տվյալ դեպքում հանդես է գալիս որպես տրված՝ ներծին մեծություն (տարր)) և գների փոփոխությունը պայմանավորող հիմնական գործոն:

**Հիմնաբառեր.** ցորենի ներմուծում, տեղական արտադրություն, միջազգային գին, ինքնաբավություն, ցորենի համաշխարհային պաշարներ, ալյուրի ինքնարժեք

JEL: D24, E39

**Ներածություն:** Վերջին տարիներին Հայաստանում տարեկան սպառվում է շուրջ 200.0 հազ. տոննա այլուր, որի ավելի քան 90%-ը տեղական արտադրության է և միայն 10%-ը՝ ներմուծված: Ընդ որում, մինչև 2017 թ. ներառյալ, Հայաստանում սպառվող այլուրի ընդհանուր ծավալի մեջ ներմուծված այլուրի մասնաբաժինը կազմել է ընդամենը 2-5%, և միայն 2018 թ. այլուրի ներմուծման ծավալների շուրջ 2.5 անգամ ավելացման արդյունքում այն հատեց 10%-ի սահմանագիծը (գծապատկեր 1):



**Գծապատկեր 1. Այլուրի ներմուծման և ներքին արտադրության ծավալները ՀՀ-ում 2015-2019 թթ. (հազ. տոննա)<sup>1</sup>**

Քանի որ ՀՀ-ում այլուրի պահանջարկը հիմնականում ապահովվում է տեղական արտադրության հաշվին, առաջին հայացքից թվում է, թե այլուրով ինքնաբավությունը բավականին բարձր է, սակայն խնդիրն այն է, որ այլուրի արտադրության համար օգտագործվող ցորենի քանակությունը տեղական արտադրության հաշվին ապահովել հնարավոր չէ, և այն առավելապես ներմուծվում է: Ընդ որում, ներմուծման մասնաբաժինը ցորենի ամբողջական առաջարկում վերջին տարիներին զգալիորեն աճել է: Այսպես, եթե 2015-2016 թթ. ՀՀ-ում ներմուծումն ապահովել է հանրապետության ցորենի ընդհանուր պաշարի շուրջ 40-45%-ը, ապա 2019 թ.՝ ավելի քան 75%-ը (գծապատկեր 2):

Սույն հետազոտության շրջանակում ՀՀ-ում այլուրի արտադրությամբ զբաղվող խոշոր ընկերություններում իրականացված հարցման արդյունքում պարզվեց, որ նրանք բոլորը միաժամանակ նաև ցորենի խոշոր ներմուծողներ են և այլուրի արտադրության համար հիմնականում օգտագործում են իրենց կողմից ներմուծված ցորենը: Այսպես, ըստ հարցման արդյունքների՝ 2018 թ. այլուր արտադրող երեք խոշոր ընկերություններ ապահովել են ՀՀ ցորենի ներմուծման ընդհանուր ծավալի ավելի քան 75%-ը, իսկ այլուրի արտադրության՝ շուրջ 78%-ը: Ինչ վերաբերում է 2019 թվականին, ապա դրանցից երկուսն ապահովել են հանրապետության ցորենի ներմուծման 77%-ը, իսկ այլուրի արտադրության՝ ավելի քան 80%-ը: Հատկանշական է, որ նշված ընկերությունների կողմից այլուրի արտադրության մեջ օգտագործված տեղական արտադրության ցորենը 2018 թ. կազմել է ընդամենը 10%, իսկ


<sup>1</sup> Գծապատկերը կազմվել է ՀՀ վիճակագրական կոմիտեի տվյալների՝ [https://www.armstat.am/file/article/f\\_sec\\_4\\_2019\\_3..pdf](https://www.armstat.am/file/article/f_sec_4_2019_3..pdf), ինչպես նաև ՀՀ ՏՄՊՊՀ տվյալների (ներմուծման ծավալները) հիման վրա:

2019 թ.՝ 6%: Հարցված ընկերությունների կողմից ներմուծված և ՀՀ-ում արտադրված ցորենի օգտագործման համամասնությունը (միջինը՝ 90/10) պայմանավորված է տեղական արտադրության ցորենի որակական ցածր հատկանիշներով: Այսպես, ՀՀ-ում արտադրված ցորենը հիմնականում 4-րդ կարգի է, որից չի ապահովվում անհրաժեշտ որակի և քանակի այլուր: Այս դեպքում, նախ, այլուրի ելքն է փոքր. եթե ռուսական 2-րդ կամ 3-րդ կարգի ցորենից այլուրի ընդհանուր ելքը, ըստ հարցման արդյունքների, կազմում է միջինը 67-72% (մեկ տոննա ցորենից ստացված այլուրի բոլոր տեսակների քանակը), ապա տեղական արտադրության ցորենից այլուրի բոլոր տեսակների ելքը չի գերազանցում 53%-ը: Բացի դրանից, տեղական արտադրության ցորենից ստացված այլուրի որակական հատկանիշներն ու կարգը ևս զգալիորեն զիջում են ներմուծված ցորենից ստացվածին: Եթե տեղական արտադրության ցորենից ստացվում է միայն 1-ին և 2-րդ կարգի այլուր, ապա ներմուծված ցորենից՝ նաև բարձրակարգ այլուր, որի ելքը 1.5-2 անգամ բարձր է 1-ին և 2-րդ կարգի այլուրի ելքի հանրագումարից (կախված ներմուծված ցորենի կարգից): Իսկ ՀՀ-ում, հարցման արդյունքների համաձայն, այլուր արտադրող ընկերությունների իրացման ծավալների մեջ ամենամեծ մասնաբաժինն ունի բարձրակարգ այլուրը, քանի որ բնակչության սպառման կառուցվածքում հատկապես մեծ է բարձրակարգ այլուրի և դրանից պատրաստված արտադրատեսակների մասնաբաժինը: Այսպես, ՀՀ սպառողական զամբյուղի շուրջ 480 անուն ապրանքների և ծառայությունների մեջ բարձր տեսակի այլուրից պատրաստված հացի կշիռը երրորդն է (4.7%)՝ էլեկտրաէներգիայի և բնական գազի դիմաց վճարումներից հետո: Իսկ բարձր տեսակի այլուրի (1.8%) ու բարձր տեսակի այլուրի հացի (4.7%) կշիռները միասին (6.5%) ՀՀ սպառողական զամբյուղում ապահովում են ամենամեծ մասնաբաժինը: Նշենք, որ սննդամթերք և ոչ ալկոհոլային խմիչքներ (ներառյալ ոգելից խմիչք և ծխախոտ) խմբում բարձր կարգի այլուրի և հացի կշիռները միասին կազմում են շուրջ 29.2%<sup>2</sup>:

Վերը նշված հանգամանքները հիմք են տալիս ենթադրելու, որ այլուրի արտադրության համար ներմուծված ու տեղական արտադրության ցորենի օգտագործման վերը նշված համամասնությունը, բացի մեր կողմից հարցված ընկերություններից (որոնք, ինչպես նշեցինք, ապահովում են ՀՀ այլուրի արտադրության 80%-ը), կարող ենք կիրառել նաև այլուր արտադրող այլ ընկերությունների նկատմամբ: Այսինքն, այլուր արտադրող խոշոր ընկերությունները հիմնականում օգտագործում են ներմուծված ցորեն, վերջինիս՝ տեղական արտադրության ցորենի փոքր ծավալների համադրման արդյունքում ապահովելով ՀՀ-ում վերջնական սպառման նպատակով օգտագործվող այլուրի շուրջ 90%-ի արտադրությունը:

Այսպիսով, մի կողմից՝ ցորենի ինքնաբավության մակարդակի նվազումը, մյուս կողմից՝ այլուրի արտադրության մեջ որակական հատկանիշներով պայմանավորված տեղական ցորենի փոքր ծավալներով օգտագործումը, պայմանավորում են ՀՀ տնտեսության զգալի կախվածությունը ներմուծվող ցորենից, որը 2018-2019 թթ., մեր գնահատումներով, կազմում է շուրջ 90% (գծապատկեր 2):

<sup>2</sup> [https://www.armstat.am/file/article/sv\\_03\\_17a\\_6200.pdf](https://www.armstat.am/file/article/sv_03_17a_6200.pdf)



**Գծապատկեր 2. Զորենի ներմուծման և ներքին արտադրության ծավալները ՀՀ-ում 2015-2019 թթ. (հազ. տոննա)<sup>3</sup>**

Այս իրավիճակի արդյունքում, օբյեկտիվ անհրաժեշտություն է առաջանում մշտապես ուսումնասիրելու ցորենի միջազգային շուկաների զարգացումները և ձևավորվող գների մակարդակը՝ որպես ներքին տնտեսությունում ցորենի, հետևաբար նաև՝ ալյուրի և հացի ինքնարժեքի բավականին մեծ ներժին բաղադրիչ (որը տվյալ դեպքում հանդես է գալիս որպես տրված մեծություն) և գների փոփոխությունը պայմանավորող հիմնական գործոն:

Սույն հետազոտության շրջանակում կփորձենք դիտարկել ցորենի միջազգային շուկայի զարգացման հիմնական միտումներն ու պատճառները, ինչպես նաև՝ ՀՀ ցորենի և ալյուրի ներքին գների վրա այդ զարգացումների ազդեցությունը:

**Գրականության ակնարկ:** 2015 թ. Ա. Ռեզիտիսը, Ա. Նթինուն և Դ. Փաշխուր, օգտագործելով է. Հարվեյի և Ս. Քուփմանի կառուցվածքային թվային շարքերի մեթոդը<sup>4</sup>, ուսումնասիրել են ցորենի և բրնձի միջազգային գների շարժընթացը և գնազոյացման բաղադրիչները 1983-2012 թվականների համար (եռամսյակային տվյալներով)<sup>5</sup>: Հեղինակները նշված ապրանքների գները տարանջատել են սեփական թրենդի, սեզոնային, պարբերաշրջանային և ոչ կանոնավոր բաղադրիչների: Էմպիրիկ վերլուծության արդյունքները վկայում են այն մասին, որ, օրինակ, ի տարբերություն բրնձի գների, որտեղ, բացի պարբերաշրջանային գործոններից, գները մեծապես պայմանավորվում են ոչ կանոնավոր բաղադրիչով, ցորենի դեպքում գները դրսևորում են պարբերաշրջանային վարքագիծ:

<sup>3</sup> Գծապատկերը կազմված է ՀՀ վիճակագրական կոմիտեի՝ [https://www.armstat.am/file/article/f\\_sec\\_4\\_2019\\_3..pdf](https://www.armstat.am/file/article/f_sec_4_2019_3..pdf), և ՀՀ ՏՄՊԴԿ տվյալների հիման վրա:  
<sup>4</sup> Տե՛ս **Harvey A., Koopman S. J.**, Unobserved Components Models in Economics and Finance, IEEE Control Systems Magazine (Vol. 29, Issue: 6, Dec. 2009), DOI: 10.1109/MCS.2009.934465, <https://ieeexplore.ieee.org/document/5338563>:  
<sup>5</sup> Reztis et al. Investigating the International Prices of Wheat and Rice, Agricultural and Food Economics (2015), DOI 10.1186/s40100-015-0035-4 [https://www.researchgate.net/publication/279222579\\_Investigating\\_the\\_international\\_prices\\_of\\_wheat\\_and\\_rice](https://www.researchgate.net/publication/279222579_Investigating_the_international_prices_of_wheat_and_rice).

Յորենի գների ձևավորման ուղղությամբ 2013 թ. բավականին ծավալուն հետազոտություն են իրականացրել Բ. Թրոեստերը և Կ. Ստարիցը<sup>6</sup>: Հեղինակները հետազոտության չորրորդ հատվածում անդրադառնում են ցորենի գների վրա ազդող գործոններին՝ դրանք ընդհանրացնելով 3 մեծ խմբերում՝

- *պահանջարկի և առաջարկի գործոններ*: Այս խմբում ներառված են այնպիսի առանցքային փոփոխականներ, ինչպիսիք են, օրինակ, աշխարհի բնակչության կայուն աճը, եկամուտների աճը և «կերակրացանկի փոփոխությունը»<sup>7</sup>, էթանոլի և կենսավառելիքի արտադրությունը<sup>8</sup>, անբավարար ներդրումները գյուղատնտեսությունում (վերջին տասնամյակներում ցորենի արտադրության ճյուղում արտադրողականության էական աճ չի նկատվում), եղանակային վատ պայմանները, արտադրական ծախսերի աճը:
- *Քաղաքականության գործոններ*: Այստեղ ընդգրկված են, օրինակ, ԱՄՆ դոլարի արժեզրկումը (քանզի ապրանքային շուկաներում գնանշումն իրականացվում է ԱՄՆ դոլարով), առևտրային սահմանափակումները, պաշարների կուտակումը (սա կարևորագույն հավասարակշռող դեր ունի պահանջարկի և առաջարկի միջև այն պարագայում, երբ պահանջարկը, ի տարբերություն առաջարկի, բավականին կայուն է):
- *Ֆինանսական սպեկուլյացիա*: Յ. Յանսենը, Բ. Քարթերը, Ա. Սմիթը և Մ. Աճեմյանը (2014)<sup>9</sup>, ուսումնասիրելով ցորենի գների թռիչքները ԱՄՆ 3 տեսակի ցորենի ֆյուչերսային շուկաներում (հետազոտությունում կառուցվել է կառուցվածքային ավտոռեգրեսիվ մոդել՝ SVAR, դիտարկված ցորենի գների փոփոխությունները գործոնների որոշակի խմբերի տարանջատելու և առանձին-առանձին դրանց հարաբերական ազդեցությունը գնահատելու համար), եզրահանգել են, որ 1991-2011 թթ. ցորենի գների թռիչքները մեծավ մասամբ պայմանավորել են ցորենի շուկային բնորոշ առաջարկի և պահանջարկի շոկերը:

Այնուամենայնիվ, հարկ ենք համարում նշել, որ տվյալ ընթացքում ցորենի կամ այլուրի գնագոյացման, դրանց արժեշտանքների ձևավորմանն ուղղված հետազոտությունների կատարման ուղղությամբ տնտեսագիտական գրականության պաշարն այնքան էլ հարուստ չէ:

**Հետազոտության մեթոդաբանություն:** Հետազոտության համար որպես վիճակագրական աղբյուր ծառայել են ցորենի համաշխարհային արտադրության, սպառման, առևտրի, համաշխարհային պաշարների և միջազ-

<sup>6</sup> Տե՛ս **Troester B., Staritz C.**, Fundamentals or Financialisation of Commodity Markets: What Determines Recent Wheat Prices?, Austrian Foundation for Development Research (ÖFSE) Working Paper N43, 2013, <https://www.econstor.eu/bitstream/10419/98786/1/774882611.pdf>.

<sup>7</sup> Պետք է նշել, որ թեև եկամտի աճը, հատկապես զարգացող երկրներում, դրական է ազդում ցորենի գների աճի վրա, սակայն որոշակի շեմի հաղթահարումից հետո այն կարող է հանգեցնել նաև կերակրացանկի փոփոխության՝ բացասաբար ազդելով ցորենի գների վրա:

<sup>8</sup> Նավթի գների էական աճի հետ մեկտեղ, սկսում է աճել սննդային հիմքով կենսավառելիքի արտադրությունը:

<sup>9</sup> Տե՛ս **Janzen J. P., Colin A. C., Smith A. D., Adjemian M. K.**, Deconstructing Wheat Price Spikes: A Model of Supply and Demand, Financial Speculation, and Commodity Price Comovement, Economic Research Service, Economic Research Report N165 (April 2014), [https://www.ers.usda.gov/webdocs/publications/45199/46439\\_err165.pdf?v=0](https://www.ers.usda.gov/webdocs/publications/45199/46439_err165.pdf?v=0):

գային գների վերաբերյալ ՄԱԿ-ի Պարենի և գյուղատնտեսության կազմակերպության (Food and Agriculture Organization (FAO)) տեղեկատվական աղբյուրները, ՀՀ ցորենի ու ալյուրի արտադրության և ներմուծման ծավալների, գների վերաբերյալ ՀՀ վիճակագրական կոմիտեի և պետական եկամուտների կոմիտեի տեղեկատվական շտեմարանները, ինչպես նաև ՀՀ ՏՄՊԴՀ տարբեր տարիների հրապարակումները: Բացի դրանից, տեղեկատվական զգալի բազա են ապահովել նաև սույն հետազոտության շրջանակում իրականացված՝ ալյուրի արտադրությամբ զբաղվող խոշոր տնտեսավարող սուբյեկտների հարցման արդյունքները: Հարցվող տնտեսավարողների կազմի և քանակի ընտրությունը կատարվել է ըստ դիտարկվող ոլորտում զբաղեցրած դիրքի առաջատարության սկզբունքի՝ հիմք ընդունելով ՀՀ հարկային ծառայության կողմից հրապարակված 2019 թ. հունվար-դեկտեմբեր ամիսների ընթացքում 1000 խոշոր հարկատուների ցանկը<sup>10</sup>: Ինչ վերաբերում է վերլուծություններում օգտագործված ցուցանիշների հաշվարկման մեթոդաբանությանը, ապա ցորենի համաշխարհային արտադրության ծավալներն արտացոլված են օրացուցային տարվա համար, իսկ ամբողջական առաջարկը ներառում է թողարկումը և առկա պաշարները՝ տարվա սկզբում: Մյուս կողմից, քանի որ ցորենի համաշխարհային առևտրի վերաբերյալ ցուցանիշները հաշվարկվում և ներկայացվում են հուլիս-հունիս մարքեթինգային տարվա կտրվածքով, ուստի հնարավոր է, որ առաջանան համաշխարհային ամբողջական առաջարկի և սպառման տարբերություններ՝ պայմանավորված առանձին երկրներում մարքեթինգային սեզոնների տարբերությամբ, որոնք սակայն, տարվա կտրվածքով դիտարկելու արդյունքում, հարթվում են: Այսպիսով, ցորենի համաշխարհային առաջարկի և համաշխարհային սպառման (պահանջարկի) փոխազդեցությամբ ձևավորված համաշխարհային գնի փոփոխությունները դիտարկվել են որպես ցորեն արտադրող բոլոր երկրների, այդ թվում՝ ՌԴ-ի արտահանման գների փոփոխության ընդհանուր թրեք: Այն ՀՀ-ի համար էական հետաքրքրություն է ներկայացնում, քանի որ ՀՀ-ում ցորենի և ալյուրի գները ձևավորվում և փոփոխվում են՝ ՌԴ արտահանման գների փոփոխություններով պայմանավորված:

Այսպիսով, ցորենի միջազգային (ՌԴ) գներն ընդունելով որպես ներծին փոփոխականներ, ճշտված ԱՄՆ դոլարի փոխարժեքով (քանի որ ՌԴ-ից ցորենը ձեռք է բերվում ԱՄՆ դոլարով), հաշվարկվել է Հայաստանում ցորենի միջին գինը, որը ներառել է փոխադրման, պահպանման ծախսերն ու հարկերը և որի հիման վրա հաշվարկվել է նաև ալյուրի միջին գինն ու գնահատվել ՌԴ ցորենի գներից վերջինիս կախվածության աստիճանը:

Հետազոտության ընթացքում օգտագործվել են մաթեմատիկական բազմաչափ վիճակագրության, գրաֆիկական վերլուծության ու համադրման, ցուցանիշների թվային շարքերի վիճակագրական վերլուծության, կոռելյացիայի մեթոդներ:

<sup>10</sup> Տե՛ս <https://www.petekamutner.am/Content.aspx?itn=tsTILists>

**Վերլուծություն**

**Ցորենի համաշխարհային շուկայի զարգացման միտումները 2015-2020 թթ.**

Ցորենի համաշխարհային արտադրության ծավալները վերջին տասը տարիներին շարունակական աճի միտում են ունեցել՝ բացառությամբ 2018-2019 թթ.: Արտադրող և արտահանող հիմնական երկրներն են Արգենտինան, Ավստրալիան, Կանադան, Եվրամիության երկրները, Ղազախստանը, Ռուսաստանի Դաշնությունը, Ուկրաինան և ԱՄՆ-ը: Եթե 2011 թ. աշխարհում արտադրվել է շուրջ 699 մլն տոննա ցորեն, ապա 2020 թ. այն կազմել է 765.0 մլն տոննա, աճը՝ շուրջ 9.4% (աղյուսակ 1):

Աղյուսակ 1

**Ցորենի համաշխարհային շուկայի հիմնական ցուցանիշները 2011-2020 թթ., փարեկան<sup>11, 12</sup>**


	Թողարկում	Ամբողջական առաջարկ	Սպառում (Utilization)	Աուկտուր	Պաշարներ՝ ժամանակաշրջանի վերջում	Համաշխարհային պաշարներ / սպառում հարաբերակցություն	Հիմնական արտահանող երկրներում պաշարներ / արտադրություն հարաբերակցություն
	մլն տոննա				%		
2011/12	699.0	901.7	693.2	149.2	204.2	29.9	18.8
2012/13	658.6	862.8	682.3	143.6	185.3	26.8	15.1
2013/14	715.3	900.6	692.2	159.4	200.4	28.3	16.0
2014/15	735.2	935.6	708.1	156.6	228.2	31.9	18.8
2015/16	737.3	965.4	717.1	167.5	242.6	32.9	18.0
2016/17	763.5	1,006.2	736.9	176.9	265.0	35.9	19.8
2017/18	761.6	1,026.6	738.1	177.4	287.0	38.2	21.0
2018/19	732.4	1,019.4	751.4	168.3	271.0	36.1	18.1
2019/20	761.6	1,032.7	750.8	184.2	274.7	36.3	15.3
2020/21	764.9	1,039.7	756.6	184.5	284.8	36.9	15.5

Ընդ որում, արտադրության ծավալների աճին զուգահեռ, սակայն ոչ համամասնորեն, աճել են նաև ցորենի ամբողջական առաջարկը՝ 15%, սպառումը՝ 10%, աուկտորի ծավալները՝ 24%, համաշխարհային պաշարները՝ շուրջ 40%: Այս դեպքում, արտադրությունը (Disappearance) դիտարկում ենք որպես տեղական սպառման և արտահանման հանրագումար: Արդյունքում, 2020-2021 թթ., 2011-2012-ի համեմատ, ցորենի համաշխարհային պաշարներ/սպառում հարաբերակցությունն աճել է 7%-ով, իսկ հիմնական արտահանող երկրի պաշարներ/արտադրությունը՝ նվազել մոտավորապես 3%-ով: Այսինքն, վեր-

<sup>11</sup> Աղբյուրը՝ ՄԱԿ-ի Պարենի և գյուղատնտեսության կազմակերպություն (FAO), <http://www.fao.org/worldfoodsituation/csdb/en/#:~:text=FAO's%20forecast%20for%20world%20wheat,of%20around%20765%20million%20tonnes>:

<sup>12</sup> 1/ Թողարկումն արտացոլված է օրացուցային տարվա համար, 2/ ամբողջական առաջարկը ներառում է թողարկումը, ինչպես նաև աուկտ պաշարները՝ տարվա սկզբին, 3/աուկտորի վերաբերյալ ցուցանիշները ցորենի դեպքում հաշվարկվում և ներկայացվում են հուլիս-հունիս մարքեթինգային տարվա կտրվածքով, 4/ հնարավոր է հավասար չլինի ամբողջական առաջարկի և սպառման տարբերությանը՝ պայմանավորված առանձին երկրներում մարքեթինգային սեզոնների տարբերությամբ:

ջին տասը տարիներին ցորենի համաշխարհային թողարկման և սպառման շարժընթացն ունի գծապատկեր 3-ում պատկերված տեսքը:



**Գծապատկեր 3. Գորենի համաշխարհային թողարկումն ու սպառումը՝ 2011-2020 թթ. (առևտրային տարիներ՝ հուլիս-հունիս, մլն տոննա)<sup>13</sup>**

Ինչպես տեսնում ենք գծապատկեր 3-ից, ցորենի և՛ արտադրությունը, և՛ սպառումը նշված տարիներին դանդաղ աճել են: Մասնավորապես, վերջին տասը տարիների ընթացքում ցորենի թողարկումն ու սպառումն աճել են գրեթե համամասնորեն՝ շուրջ 9%-ով (թողարկումը փոքր-ինչ ավելի արագ), սակայն պետք է նաև նշել, որ 2015-2019 թթ., նախորդող ժամանակահատվածի համեմատ, աճի տեմպերն ավելի դանդաղ են եղել:

Թեև թողարկման և սպառման աճի տեմպերը գրեթե հավասար են եղել, նշված ամբողջ ժամանակահատվածում թողարկման ծավալը հիմնականում գերազանցել է սպառման ծավալը, որի պարագայում նշված տարիներին բավականին աճել են պաշարվող ցորենի համաշխարհային ծավալները: Այսպես, եթե օրինակ 2011 թ. ցորենի համաշխարհային պաշարները կազմում էին համաշխարհային սպառման շուրջ 30%-ը, 2015 թ.՝ շուրջ 33%-ը, ապա 2019-2020 թթ. առևտրային տարվա արդյունքներով՝ շուրջ 37%-ը:

Ինչ վերաբերում է վերջին տասնամյակում ցորենի համաշխարհային գների փոփոխություններին, ապա, ընդհանուր առմամբ, վերջիններս դրսևորել են նվազման միտում (գծապատկեր 4): Ընդ որում, վերջին տասնամյակը, ցորենի գների փոփոխության առումով, կարելի է բաժանել երեք հիմնական հատվածների՝

1. 2011-2015 թթ., երբ ցորենի միջազգային գները բավականին տատանողական են եղել և, ընդհանուր առմամբ, էականորեն նվազել են,
2. 2015-ից 2018 թ. առաջին կիսամյակ, որը կարելի է բնորոշել որպես տատանողականության նվազման և գների կայունացման փուլ: Այս ժամանակահատվածում ցորենի գները ձևավորվել են միջինը 200 ԱՄՆ դոլարի շուրջ (մեկ տոննայի համար),
3. 2018 թ. երկրորդ կիսամյակից մինչ 2020 թ. երրորդ եռամսյակ: Այս շրջանը կարելի է բնութագրել որպես գների դանդաղ վերականգնը-


<sup>13</sup> Աղբյուրը՝ ՄԱԿ-ի Պարենի և գյուղատնտեսության կազմակերպություն (FAO), <http://www.fao.org/worldfoodsituation/csdb/en/#:~:text=FAO's%20forecast%20for%20world%20wheat,of%20around%20765%20million%20tonnes>:



ման փուլ, ինչը որոշակիորեն խաթարվեց՝ նոր տեսակի կորոնա-վիրուսի՝ համաշխարհային տնտեսության վրա ունեցած բացասական ազդեցություններով պայմանավորված:

Հարկ է նշել, որ, օրինակ, վերջին շուրջ 20 տարում ցորենի միջազգային միջին ամսական գինը (գծապատկեր 4-ում ներառված երկրներում, որոնք ապահովում են համաշխարհային արտադրության էական մասը) կազմել է շուրջ 230 ԱՄՆ դոլար, վերջին 10 տարում՝ 240 ԱՄՆ դոլարից փոքր-ինչ ավելի, իսկ վերջին 5 տարում արդեն՝ շուրջ 207 ԱՄՆ դոլար:

Գծապատկեր 4-ից կարելի է նկատել նաև, որ չնայած տարբեր երկրների կողմից արտադրվող և արտահանվող ցորենի տեսակների գների մակարդակների տարբերություններին, որոնք հիմնականում պայմանավորված են որակական հատկանիշներով, դրանց փոփոխությունների ուղղություններն ու չափերը մեծապես նույնական են<sup>14</sup>: Փոփոխությունների ուղղության և չափերի համընկնման աստիճանը հատկապես բարձր է 2015-2020 թթ. (գծապատկեր 4-ում ընդգծված հատվածը):



**Գծապատկեր 4. Ցորենի միջազգային (միջինացված արտահանման) գները՝ հիմնական արտահանող որոշ երկրներում, ամսական, 2011/01-2020/09 (ԱՄՆ դոլար 1 տոննայի համար)<sup>15</sup>**

Սա ևս մեկ անգամ վկայում է այն մասին, որ ցորենի գները պայմանավորվում են գլոբալ տնտեսության զարգացմամբ և ոչ թե առանձին երկրների ներքին ֆունդամենտալներով: Արտահանող առանձին երկրներում ցորենի միջազգային գների փոփոխության ուղղության և չափերի նույնական լինելը

<sup>14</sup> Ст'ю Обзор рынка зерна в государствах-членах Евразийского экономического союза за 2010-2014 годы, Департамент агропромышленной политики, Евразийская экономическая комиссия, М., 2015. Узун В.Я., Светлов Н.М., Шагайда Н.И., Логинова Д.А., Шишкина Е.А., Совершенствование механизмов государственного регулирования российского рынка зерна, Российская академия народного хозяйства и государственной службы при президенте Российской Федерации, М., 2017.

<sup>15</sup> Աղբյուրը՝ ՄԱԿ-ի Պարենի և գյուղատնտեսության կազմակերպություն (FAO), [https://fpma.apps.fao.org/giews/food-prices/tool/public/?fbclid=IwAR0XcZpJX\\_7o3J3ostw05mOTc5aZyU459Z\\_U3kFPjimMZx-L5OZX4tsWeM#/dataset/international:](https://fpma.apps.fao.org/giews/food-prices/tool/public/?fbclid=IwAR0XcZpJX_7o3J3ostw05mOTc5aZyU459Z_U3kFPjimMZx-L5OZX4tsWeM#/dataset/international:)

կարելի է տեսնել նաև ցորեն արտահանող հիմնական երկրների միջազգային գների միջև կոռելյացիայի գործակիցների օգնությամբ (աղյուսակ 2):

Աղյուսակ 2


**Ցորեն արտահանող հիմնական երկրների միջազգային գների միջև կոռելյացիան**

	Արգենտինա	Կանադա	Ֆրանսիա	Միացյալ Թագ.	Ղազախստան	Ռուսաստան	ԱՄՆ	ՌԻԿրաինա
Արգենտինա	1							
Կանադա	0.85	1						
Ֆրանսիա	0.89	0.85	1					
Միացյալ Թագ.	0.92	0.83	0.97	1				
Ղազախստան	0.74	0.39	0.66	0.66	1			
Ռուսաստան	0.88	0.67	0.96	0.95	0.73	1		
ԱՄՆ	0.94	0.90	0.95	0.96	0.72	0.93	1	
ՌԻԿրաինա	0.95	0.86	0.97	0.97	0.74	0.98	0.96	1

Ինչպես տեսնում ենք աղյուսակ 2-ում, կոռելյացիայի գործակիցները բարձր են գրեթե բոլոր զույգերում, իսկ օրինակ՝ Ռուսաստանի պարագայում, որը մեզ համար ամենամեծ հետաքրքրությունն է ներկայացնում որպես ցորենի ներմուծման հիմնական աղբյուր, կոռելյացիայի գործակիցները մյուս երկրների հետ գերազանցապես շատ բարձր են: Այսպիսով, կարող ենք պնդել, որ ցորենի միջազգային գները ձևավորվում են՝ պայմանավորված համաշխարհային առաջարկի և պահանջարկի հարաբերակցությամբ, իսկ տարբեր երկրների կողմից արտահանվող ցորենի գների տարբերությունները հիմնականում որակական հատկանիշների տարբերությունների արդյունք են և ժամանակի մեջ բավականին կայուն:

Այսպիսով, դիտարկվող ժամանակահատվածում ցորենի համաշխարհային արտադրության ծավալների՝ սպառմանը գերազանցելու, հետևաբար նաև՝ կուտակվող պաշարների աճի վերոնշյալ գործընթացը պայմանավորել են սույն հետազոտությամբ հիմնավորվող փաստարկը՝ վերջին տարիների ընթացքում ցորենի միջազգային գների նվազող թրենդի վերաբերյալ:


Գծապատկեր 5-ում ներկայացնենք ցորենի միջազգային գները և թողարկման ու սպառման միջև խզումը:



**Գծապատկեր 5. Ցորենի համաշխարհային թողարկման ու սպառման միջև խզման և գների միջև կապը 2011-2020 թթ.<sup>16</sup>**

<sup>16</sup> Գծապատկերում թողարկման և սպառման միջև տարբերությունը ներկայացված է որպես թերսպառում: Որպես ցորենի միջազգային գին վերցրել ենք ռուսական ցորենի արտահանման միջին տարեկան գները:

Բնականաբար, ինչպես երևում է գծապատկեր 5-ից, ցորենի գները պայմանավորվում են թողարկման և սպառման դիֆերենցիալով: Ընդ որում, կարող ենք նշել, որ գների էլաստիկությունը թերսպառումից (կամ գերարտադրությունից) բավականին բարձր է: Այսպես օրինակ՝ 2012 թ. սպառումը գերազանցել է թողարկումը շուրջ 24 մլն տոննայով կամ թողարկման շուրջ 3.5%-ի չափով, որի պարագայում ռուսական ցորենի գինն աճել է շուրջ 80 ԱՄՆ դոլարով (շուրջ 30%): Իսկ հաջորդող հինգ տարիներին, մոտավորապես նույն չափի թերսպառումների միջավայրում, ռուսական ցորենի գինը նվազել է գրեթե 2 անգամ: Թեև վերջին երկու տարիների ընթացքում ցորենի գները որոշակիորեն վերականգնվել են, այնուհանդերձ, դեռևս շարունակում են մնալ ցածր: Իսկ ռուսական ցորենի գնի փոփոխությունները, ինչպես արդեն նշել ենք, հիմնականում համընկնում են այլ՝ արտահանող երկրների գների փոփոխություններին<sup>17</sup> (գծապատկեր 6):



**Գծապատկեր 6. Ռուսաստանի և մյուս երկրների կողմից արտահանվող ցորենի գների փոփոխությունները՝ 2011-2020 թթ.**

**Ցորենի գների ձևավորումն ու փոփոխությունների շարժընթացը ՀՀ-ում**

Հայաստանի Հանրապետություն ցորենն ու այլուրը ներմուծվում են հիմնականում Ռուսաստանի Դաշնությունից: Դիտարկվող՝ 2015-2020 թթ. ժամանակահատվածում, ՌԴ-ից ներմուծման ամենափոքր մասնաբաժինն ընդհանուր ներմուծման մեջ եղել է 2018-2019 թթ., որը կազմել է համապատասխանաբար 89% և 88%: Մյուս տարիներին այն գերազանցել է 90%-ը (աղյուսակ 3):

Նույն պատկերն է նաև այլուրի ներմուծման պարագայում. ՌԴ-ից ներմուծումը կազմում է ընդհանուր այլուրի ներմուծման գերակշիռ մասը՝ 98-99% (աղյուսակ 4):

<sup>17</sup> Տե՛ս **Алтухов А.**, Система сбыта зерна как фактор становления развитого зернового рынка в России // Экономика сельского хозяйства России, Vol. 8, 2014.

**Աղյուսակ 3**

**Ցորենի ներմուծման ծավալները՝ ըստ հիմնական երկրների<sup>18</sup>, հազ. տոննա**

Երկիրը	2015		2016		2017		2018		2019	
	Ծավալ հազ. տ	Տեսակ. կշիռ	Ծավալ հազ. տ	Տեսակ. կշիռ	Ծավալ հազ. տ	Տեսակ. կշիռ	Ծավալ հազ. տ	Տեսակ. կշիռ	Ծավալ հազ. տ	Տեսակ. կշիռ
ՌԴ	315.4	99.2	228.0	90.9	279.4	92.1	277.6	89.0	301.1	87.5
Վրաստան	1.9	0.6	4.5	1.8	24.0	7.9	34.3	11.0	18.6	5.4
Ուկրաինա	0.3	0.1	-	-	-	-	-	-	24.0	7.0
Ղազախստան	-	-	18.3	7.3	-	-	-	-	-	-
Ընդամենը	317.9		250.8		303.4		311.9		344.1	

**Աղյուսակ 4**

**Այլուրի ներմուծման ծավալները՝ ըստ հիմնական երկրների<sup>19</sup>, հազ. տոննա**

Երկիրը	2015		2016		2017		2018		2019	
	Ծավալ հազ. տ	Տեսակ. կշիռ	Ծավալ հազ. տ	Տեսակ. կշիռ	Ծավալ հազ. տ	Տեսակ. կշիռ	Ծավալ հազ. տ	Տեսակ. կշիռ	Ծավալ հազ. տ	Տեսակ. կշիռ
ՌԴ	12.6	99.4	5.5	98.3	9.8	99.2	21.8	98.8	19.6	99.2
Իտալիա	0.01	0.08	0.01	0.2	0.02	0.2	0.04	0.2	0.06	0.3
Լեհաստան	0.02	0.14	0.03	0.5	0.01	0.1	0.03	0.15	0.01	0.06
Ղազախստան	0.05	0.4	0.05	0.9	0.04	0.41	0.1	0.6	0.07	0.35
Ընդամենը	12.7		5.6		9.9		22.1		19.8	

Դիտարկվող ժամանակահատվածում այլուրի ներմուծման ամենամեծ բաժինը՝ 98% և ավելի, իրականացվում է ՌԴ-ից:

Այսինքն, վստահաբար կարելի է պնդել, որ ՌԴ-ում ցորենի և այլուրի արտահանման գները հիմք են հանդիսանում ՀՀ-ում ցորենի և այլուրի գների ձևավորման համար, և մեր հանրապետության նշված շուկաներում գնային տատանումները պայմանավորող էական գործոնը հենց ՌԴ արտահանման գների փոփոխություններն են, իհարկե, ճշգրտված ԱՄՆ դոլարի փոխարժեքով, քանի որ նշված ապրանքատեսակների ներմուծումը ՌԴ-ից իրականացվում է ԱՄՆ դոլարով:


Հարկ է նշել նաև, որ ցորենի միջազգային գների և ՀՀ-ում այլուրի գների ուսումնասիրության արդյունքում ակնհայտ է դառնում, որ ցորենի ձեռք բերման գները տարվա ընթացքում դրսևորում են նաև որոշակի սեզոնայնություն: Մասնավորապես, ՀՀ ներմուծվող ցորենի գերակշիռ մասը, քանի որ ներմուծվում է ՌԴ-ից, իսկ ՌԴ-ում ցորենի բերքահավաքը տարին մեկ անգամ՝ հունիս-օգոստոս ամիսներին է (արևադարձային երկրներում՝ 2 անգամ), ցորենի ձեռք բերման գներն այդ ժամանակահատվածում որոշակիորեն նվազում են. բերքահավաքից հետո մեծանում է ցորենի առաջարկը և

<sup>18</sup> Աննշան ծավալներով ցորենի ներմուծում իրականացվում է նաև այլ երկրներից, որոնք էական ազդեցություն չեն ունենում ընդհանուր ներմուծման վրա, և ըստ տարիների գումարային ներմուծումը չի գերազանցում 0.1%-ը (Բելառուս, Թուրքիա, Լեհաստան և այլն):

<sup>19</sup> Աննշան ծավալներով այլուրի ներմուծում իրականացվում է նաև այլ երկրներից, որոնք էական ազդեցություն չեն ունենում ընդհանուր ներմուծման վրա (Բելառուս, Գերմանիա, Հնդկաստան, Ֆրանսիա և այլն), ըստ տարիների գումարային ներմուծումը չի գերազանցում 0.1%-ը:


դրա հետևանքով գները նվազում են (եթե տարին երաշտային չէ): Յորենի բերքահավաքից հետո, որքան մոտենում են հաջորդ տարվա գարնան ամիսները ու նվազում են ցորենի պաշարները, այնքան ցորենի գինը բարձրացման միտում է դրսևորում: Այս խնդիրը ցորենի ներմուծմամբ և այլուրի արտադրությամբ զբաղվող ընկերությունները փորձում են հարթել՝ ձեռք բերվող խմբաքանակների և պահեստավորման հաշվին, մասնավորապես՝ ցորենի հիմնական ներմուծումն իրականացվում է օգոստոս-հոկտեմբեր ամիսներին, ինչի շնորհիվ հնարավոր է լինում ՀՀ-ում որոշակիորեն հարթել այլուրի գնային տատանումները:

Եթե դիտարկենք ՀՀ-ում ցորենի ինքնարժեքի ձևավորման և այլուրի արտադրության գործընթացն ու այլուրի գնի ձևավորման ընթացքը, ապա պետք է նշել, որ արտադրական այս շղթան ընդգրկում է ցորենի ներմուծման և մինչև պահեստ փոխադրման, պահեստավորման ծախսերը, ցորենի վերադիրը, որոնց հիման վրա ձևավորվում է ցորենի գինը, այնուհետև՝ այլուրի արտադրության ծախսերը, այլուրի վերադիրն ու իրացման ծախսերը, որոնց հիման վրա ձևավորվում է այլուրի գինը: Դիտարկենք ցորենի ինքնարժեքի ձևավորման շղթան (գծապատկեր 7):



**Գծապատկեր 7. Մինչև պահեստ ցորենի ինքնարժեքի ձևավորման գործընթացը, ամսական, 2018-2020 թթ. փետրվար**

Ինչպես տեսնում ենք, ցորենի ձեռք բերման գները (ԱՄՆ դոլարով արտահայտված) ընտրված ժամանակաշրջանում բավականին տատանողական են եղել: Մասնավորապես, եթե, օրինակ, դիտարկվող ժամանակաշրջանի սկզբում ցորենի 1 տոննան արժեցել է շուրջ 150 ԱՄՆ դոլար, ապա ժամանակահատվածի վերջում արդեն՝ շուրջ 230 ԱՄՆ դոլար: Ստորև ներկայացնենք ցորենի ինքնարժեքի ձևավորման գործընթացն ամբողջ ժամանակահատվածի համար՝ կշռված միջինի մեթոդով (գծապատկեր 8):



**Գծապատկեր 8. Մինչև պահեստ գործերի ինքնարժեքի ձևավորման գործընթացը՝ միջինացված 2018-2020 թթ. փետրվար ժամանակահատվածի համար**

Այսպիսով, կարող ենք նշել, որ գործերի ձեռք բերումից մինչև դրա պահեստ հասնելը գործերի գինն ավելանում է միջինը շուրջ 27%-ով, ընդ որում, մինչև Այրում կայարան գործերի փոխադրումը շուրջ 3 անգամ ավելի թանկ է (սա մինչև պահեստ ճանապարհի մեծ մասն է), քան արդեն երկրի ներսում դրա փոխադրումը մինչև պահեստ: Այսպիսով, 1 տոննա գործերի գնագոյացման գործընթացը կարող ենք ներկայացնել հետևյալ կերպ<sup>20</sup>.




Ինչպես արդեն նշել ենք, ՀՀ ներմուծված գործերը հիմնականում (80 և ավելի տոկոս) օգտագործվում է այլուրի արտադրության մեջ: Իսկ ներմուծված գործերի ներքին մեծածախ վաճառքի դեպքում (ներառյալ ԱԱՀ-ն) վերադիրը, համաձայն մեր հաշվարկների, օրինակ, 2018 թ. առաջին կիսամյակում, միջինում կազմում է շուրջ 5.5%, իսկ ամբողջ ժամանակահատվածի համար՝ 4.5%-ից փոքր-ինչ պակաս, ինչը ևս փաստում է տվյալ ոլորտում մրցակցության խորացման մասին:


Գծապատկեր 9-ում ներկայացված է գնագոյացման մեխանիզմը այլուրի արտադրական գործընթացում:

Վարչական ծախսերը և աշխատավարձերը, ըստ էության, ամենախոշոր ծախսային բաղադրիչներն են այլուրի արտադրության գործընթացում, որոնցից յուրաքանչյուրը այլուրի գնին ավելացնում է մոտավորապես 5%: Ընտրված ժամանակահատվածի համար արտադրական գործընթացում գնագոյացումն ունի գծապատկեր 10-ում բերված տեսքը:

<sup>20</sup> Նշենք, որ ներկայացված սխեմայում գործերի ինքնարժեքը որոշակիորեն տարբերվում է ՏՄՊԴՀ-ի կողմից ներկայացված ինքնարժեքից, ինչը, կարծում ենք, առավել բարձր հաճախականությամբ թվային շարքերի առկայության պարագայում չէր առաջանա կամ ավելի փոքր կլիներ (փոխարժեքի էֆեկտ): Հետագա շեղումներից խուսափելու համար, արտադրական փուլում օգտագործել ենք ՏՄՊԴՀ տրամադրած շարքերը:




**Գծապատկեր 9. Արտադրական գործընթացում ալյուրի գնագոյացումը, ամսական, 2018-2020 թթ. փետրվար**




**Գծապատկեր 10. Արտադրական գործընթացում ալյուրի ինքնարժեքի ձևավորման գործընթացը՝ միջինացված 2018-2020 թթ. փետրվար ժամանակահատվածի համար**

Ամփոփելով արտադրական գործընթացը՝ ներկայացնենք նաև այս փուլում ինքնարժեքի (1 տոննայի հաշվով) ձևավորումը բաղադրիչների տեսքով՝



Այսպիսով, նշված ժամանակահատվածում ալյուրի ինքնարժեքը միջինում կազմել է շուրջ 275 ԱՄՆ դոլար: Այսինքն, արտադրական փուլում, ընդհանուր առմամբ, բոլոր ծախսերը միասին կազմում են շուրջ 40 ԱՄՆ դոլար՝ մեկ տոննայի հաշվով (լրացուցիչ շուրջ 18% ավելացված արժեք՝ ցորենի ինքնարժեքի նկատմամբ):

Նշենք նաև, որ արտադրական ծախսերի մեջ էականորեն գերակշռում են ուղղակի ծախսերը (գծապատկեր 11):




**Գծապատկեր 11. Ուղղակի և անուղղակի ծախսերի հարաբերակցությունը, ամսական, 2018-2020 թթ. փետրվար, %**

Այժմ փորձենք անդրադառնալ նաև ցորենի ներմուծման և այլուրի արտադրության շահույթաբերությանը: Ներկայացնենք այլուրի արտադրությամբ զբաղվող ընկերությունների կողմից ցորենից արտադրվող բարձրակարգ, առաջին և երկրորդ կարգի այլուրի, ինչպես նաև թեփի համամասնությունն ըստ հարցման արդյունքների, քանի որ այլուրի արտադրությամբ ու վաճառքով զբաղվող տնտեսավարող սուբյեկտների հարցման արդյունքների համաձայն՝ այլուրի մանրածախ վաճառքի գների վրա որոշակի ազդեցություն ունի նաև ցորենից այլուրի ելքը: Այսպես, 1 կգ ցորենից բարձր տեսակի այլուրի ելքը, կիրառվող տեխնոլոգիայից կախված, << տարբեր ընկերություններում տատանվում է 32-45% միջակայքում, 1-ին կարգի այլուրինը՝ 19-31%, 2-րդ կարգի այլուրի դեպքում՝ 6-10% և ցորենի թեփի՝ 25-27%: Այսինքն, 1 կգ ցորենից բոլոր տեսակների այլուրի ելքը միջին հաշվով 70% է: Համաձայն հարցման արդյունքների՝ <<-ում, այլուրի տեսակների մեջ ծավալով ամենաշատն իրացվում է բարձրակարգ այլուրը, և քանի որ այլուրի արտադրությունը հիմնականում իրականացվում է ներմուծված ցորենից, հետևաբար այլուրի մանրածախ վաճառքի գներն ուղղակիորեն կախված են ցորենի ձեռք բերման միջազգային գներից:

Հաշվի առնելով ցորենից արտադրվող տարբեր մակնիշի այլուրի և թեփի հարաբերակցությունը, ինչպես նաև դրանց իրացման շուկայական գները, ներկայացնենք մեկ տոննա ցորենից ստացվող համախառն արդյունքն ընթացիկ շուկայական գներով, մեր կողմից հաշվարկված ինքնարժեքը և հետևաբար՝ շահույթը (գծապատկեր 12):

Ինչպես տեսնում ենք գծապատկեր 12-ից, 2018-2020 թթ. ընթացքում դանդաղ նվազել է վերադիրը՝ թողարկման շուկայական արժեքի և ինքնարժեքի միջև տարբերությունը, ինչը, կարծում ենք, շուկայական մրցակցության խորացման արդյունք է: Խոսքը հատկապես շուկայում գործունեություն իրականացնող խոշոր ընկերությունների միջև մրցակցության մասին է: Եթե, օրինակ, 2018 թ. առաջին կիսամյակում վերադիրը, համաձայն մեր հաշվարկների, միջինում կազմում էր մոտավորապես 13.4%, ապա ամբողջ ժամանակահատվածի համար արդեն՝ 7.5%: Ճիշտ է, որոշ ամիսներին վերադիրը նաև բացասական է ստացվում, սակայն պետք է հաշվի առնել, որ այստեղ կարող են անհամապատասխանություններ լինել թողարկման և իրացման ամիսների միջև (լագային էֆեկտներ):






**Գծապատկեր 12. ՀՀ-ում ալյուրի միջին շուկայական արժեքը, ինքնարժեքն ու շահույթը, 2018-2020 թթ. փետրվար, ԱՄՆ դոլար**

**ՀՀ ցորենի և ալյուրի ներքին գների կախվածությունը ՌԴ ցորենի արտահանման գներից**

Ինչպես արդեն նշել ենք, Հայաստանում սպառվող ալյուրի գերակշիռ մասը՝ ավելի քան 90%-ը, կազմում է տեղական արտադրության ալյուրը, որի համար անհրաժեշտ ցորենի շուրջ 90%-ը ներմուծվում է: Այսինքն, կարող ենք արձանագրել, որ ՀՀ-ում վերջնական սպառման նպատակով օգտագործվող ալյուրի ավելի քան 80%-ն արտադրվում է ներմուծված ցորենից: Սրանից հետևում է, որ ՀՀ-ում ցորենի ներքին գները մեծապես պայմանավորված են ցորենի ներմուծման գների մեծությամբ, քանի որ ներմուծվող ցորենի ինքնարժեքի (ինքնարժեքը՝ պահեստում) շուրջ 80%-ը կազմում է ցորենի ձեռք բերման գինը: Իր հերթին, ալյուրի ինքնարժեքի 86%-ն էլ կազմում է ցորենի արժեքը: Այսինքն, կարող ենք պնդել, որ Հայաստանում սպառվող ալյուրի ինքնարժեքի շուրջ 70%-ը կազմում է միջազգային շուկայում ցորենի ձեռք բերման գինը: Իհարկե, այս համամասնությունները որոշակիորեն փոխվում են, եթե դիտարկենք ոչ թե ցորենի և ալյուրի ինքնարժեքները, այլ շուկայական գները՝ վերադիրների ներառմամբ: Այս դեպքում միջազգային շուկայում ցորենի ձեռք բերման գինը կկազմի տեղական ալյուրի շուկայական գնի շուրջ 60%-ը, ինչը հաստատվում է նաև ցորենի ներմուծմամբ ու ալյուրի արտադրությամբ զբաղվող տնտեսավարող սուբյեկտների հարցման արդյունքներով: Այս ցուցանիշը նույնպես ինքնին բավականին բարձր է և վկայում է տեղական ալյուրի շուկայական արժեքի ձևավորման վրա միջազգային գների ունեցած վճռորոշ ազդեցության մասին:

Նկատի ունենալով այն հանգամանքը, որ ցորենի ներմուծումը գրեթե ամբողջությամբ (շուրջ 90%-ը) իրականացվում է Ռուսաստանի Դաշնությունից, ակնհայտ է, որ ՀՀ ցորենի ներքին գների տատանումներն էականորեն պայմանավորված են ՌԴ արտահանման գների փոփոխությամբ: Վերջիններս էլ, ինչպես արդեն համոզվեցինք վերը կատարված դիտարկումների արդյունքում, իրենց հերթին, խիստ զգայուն են միջազգային գների տատանումների հանդեպ: ՌԴ-ի և ցորենի համաշխարհային շուկայում առանցքային խաղացողներ համարվող երկրների՝ ցորենի արտահանման գների միջև կոռելյացիայի գործակիցները բավականին բարձր են:

Գծապատկեր 13-ում ներկայացված է ցորենի ՀՀ ներքին գների և ՌԴ-ում դրանց ձեռք բերման գների շարժընթացը 2018-2020 թթ. (2020 թ.՝ հունվար-փետրվար ամիսների կտրվածքով):



**Գծապատկեր 13. Ցորենի գների շարժընթացը Հայաստանի Հանրապետությունում և Ռուսաստանի Դաշնությունում 2018-2020 թթ., ԱՄՆ դոլար<sup>21</sup>**

Ինչպես տեսնում ենք, ՀՀ-ում ցորենի ներքին գների փոփոխության միտումները հիմնականում համընկնում են ՌԴ ցորենի արտահանման գների փոփոխություններին: Այս երկու երկրների ցորենի գների միջև կոռելյացիայի գործակիցը, մեր գնահատումներով, կազմում է 0.62, որը բավականին բարձր ցուցանիշ է:

Ընդ որում, ՀՀ-ում ցորենի ներքին գները ՌԴ համապատասխան գների փոփոխություններին արձագանքում են որոշակի ժամանակային խզումներով (մեր գնահատումներով՝ իջեցման դեպքում այն կազմում է միջինը 2 ամիս), որը պայմանավորված է բազմաթիվ գործոններով. սեզոնայնությամբ, ձեռք բերելու պարբերականությամբ և ձեռք բերվող խմբաքանակների մեծությամբ (ըստ հարցման արդյունքների՝ ձեռք բերելու պարբերականությունը կազմում է 1 ամիս), փոխադրման ժամանակահատվածով (միջինը 5-7 օր), առկա պաշարների փոփոխությամբ, ինչպես նաև՝ ՀՀ ցորենի շուկայում մրցակցային իրավիճակով: Սակայն, չնայած արձագանքի դանդաղ լինելուն, ՀՀ-ում ցորենի գների փոփոխությունները ՌԴ արտահանման գների փոփոխությունների համեմատ առավել կտրուկ են: Իսկ ինչ վերաբերում է միջազգային գների փոփոխության հանդեպ ունեցած արձագանքին, ապա այն ավելի համաչափ և արագ է բարձրացման դեպքում (մինչև 1 ամիս լագով) և դանդաղ ու անհամաչափ՝ նվազման դեպքում: Միջազգային գների փոփոխություններին ներքին գների արձագանքի այսպիսի բնույթը պայմանավորված է ՀՀ ցորենի շուկայի կառուցվածքով՝ տնտեսավարող սուբյեկտների սակավությամբ ու կենտրոնացվածության բավականին բարձր մակարդակով: Այսինքն, եթե

<sup>21</sup> Գծապատկերը կազմված է ՀՀ վիճակագրական կոմիտեի՝ [https://www.armstat.am/file/article/gner\\_2019\\_6.pdf](https://www.armstat.am/file/article/gner_2019_6.pdf) և ԱՄԿ-ի Պարենի և գյուղատնտեսության կազմակերպության (FAO)՝ [https://fpma.apps.fao.org/giews/food-prices/tool/public/?fbclid=IwAR0XcZpJX\\_7o3J3ostw05m OTc5aZyU459Z\\_U3kFPjimMZx-L5OZ4tsWeM#/dataset/international](https://fpma.apps.fao.org/giews/food-prices/tool/public/?fbclid=IwAR0XcZpJX_7o3J3ostw05m OTc5aZyU459Z_U3kFPjimMZx-L5OZ4tsWeM#/dataset/international), տվյալների հիման վրա:

բացառենք մրցակցային իրավիճակով պայմանավորված գների տատանումները, ապա ցորենի միջազգային գների փոփոխությունները Հայաստան «հասնում են» շուրջ 1 ամիս անց, ինչը կարող ենք համարել «բնական լագ»:

Այս դեպքում, հաշվի առնելով 1 ամիս լագի գործոնը, եթե փորձենք դիտարկել ՀՀ-ում ցորենի ներքին գների կոռելյացիան ՌԴ արտահանման գների հետ, ապա այն բավական բարձր է ստացվում և ապացուցում է սույն հետազոտության շրջանակում առաջ քաշված վարկածը, որ ՀՀ-ում ցորենի ներքին գների փոփոխության չափն ու ուղղությունները շուրջ 80%-ով համընկնում են ՌԴ գների փոփոխություններին, քանի որ կոռելյացիայի գործակիցն այս դեպքում զգալիորեն բարձր է՝ 0.82:

### Եզրակացություններ

1. Ցորենի համաշխարհային արտադրության և սպառման ծավալները վերջին 10 տարիների ընթացքում աճել են համամասնորեն և գրեթե միևնույն միջին տեմպով՝ շուրջ 9%-ով (թողարկումը՝ փոքր-ինչ ավելի արագ), սակայն 2015-2019 թթ., նախորդող ժամանակահատվածի համեմատ, աճի տեմպերն ավելի դանդաղ են եղել: Թեև թողարկման և սպառման աճի տեմպերը գրեթե հավասար են եղել, նշված ամբողջ ժամանակահատվածում թողարկման ծավալը հիմնականում գերազանցել է սպառման ծավալը, որի պարագայում նշված տարիներին բավականին աճել են պաշարվող ցորենի համաշխարհային ծավալները: Արդյունքում, եթե 2011 թ. ցորենի համաշխարհային պաշարները կազմում էին համաշխարհային սպառման շուրջ 30%-ը, իսկ 2015 թ.՝ շուրջ 33%-ը, ապա 2019-2020 թթ. առևտրային տարվա արդյունքներով արդեն՝ շուրջ 37%-ը:
2. Վերջին տասնամյակում ցորենի համաշխարհային գները դրսևորել են հիմնականում նվազման միտում: Այսպես, 2011-2015 թթ. ցորենի միջազգային գները բավականին տատանողական են եղել և էականորեն նվազել են, իսկ 2015-ից մինչև 2018 թ. առաջին կիսամյակը տատանողականությունը նվազել է, և գները կայունացել են 200 ԱՄՆ դոլարի շուրջ: 2018 թ. երկրորդ կիսամյակից մինչ 2020 թ. երրորդ եռամյակը գները դանդաղորեն վերականգնվել են, սակայն վերականգնման ընթացքը որոշակիորեն խաթարվել է՝ նոր տեսակի կորոնավիրուսի՝ համաշխարհային տնտեսության վրա ունեցած բացասական ազդեցություններով պայմանավորված: Այսպիսով, վերջին շուրջ 20 տարում ցորենի միջազգային միջին ամսական գինը կազմել է շուրջ 230 ԱՄՆ դոլար, վերջին 10 տարում՝ 240 ԱՄՆ դոլար, իսկ վերջին 5 տարում՝ շուրջ 207 ԱՄՆ դոլար:
3. Վերջին տասնամյակում, չնայած տարբեր երկրների կողմից արտադրվող և արտահանվող ցորենի տեսակների գների մակարդակների տարբերություններին, որոնք հիմնականում պայմանավորված են որակական հատկանիշներով, դրանց փոփոխությունների ուղղություններն ու չափերը մեծապես նույնական են, ինչը հատկապես բարձր է 2015-2020 թթ.: Այսինքն, կարող ենք փաստել, որ ցորենի գները պայմանավորված են զլոբալ տնտեսության զարգացմամբ և ոչ թե առանձին երկրների ներքին ֆունդամենտալներով:

4. Յորեն արտահանող առանձին երկրներում ցորենի միջազգային գների փոփոխության ուղղության և չափերի նույնական լինելը ապացուցվում է նաև ցորեն արտահանող հիմնական երկրների միջազգային գների միջև կոռելյացիայի բարձր գործակիցների օգնությամբ: Ռուսաստանի պարագայում, որը մեզ համար ամենամեծ հետաքրքրությունն է ներկայացնում որպես ցորենի ներմուծման հիմնական աղբյուր, մյուս երկրների հետ կոռելյացիայի գործակիցները մեծավ մասամբ շատ բարձր են: Այսպիսով, կարող ենք պնդել, որ ցորենի միջազգային գները ձևավորվում են համաշխարհային առաջարկի և պահանջարկի հարաբերակցությամբ, իսկ տարբեր երկրների կողմից արտահանվող ցորենի գների տարբերությունները հիմնականում որակական հատկանիշների տարբերությունների արդյունք են և ժամանակի մեջ՝ բավականին կայուն:
5. Յորենի համաշխարհային գների փոփոխությունը պայմանավորված է համաշխարհային թողարկման և սպառման դիֆերենցիալով: Ընդ որում, գների էլաստիկությունը թերսպառումից (կամ գերարտադրությունից) բավականին բարձր է: Այսպես, 2012 թ. համաշխարհային սպառումը թողարկումը գերազանցել է շուրջ 24 մլն տոննայով կամ թողարկման շուրջ 3.5%-ի չափով, որի արդյունքում ռուսական ցորենի գինն աճել է շուրջ 30%-ով: Իսկ հաջորդող հինգ տարիների ընթացքում, մոտավորապես նույն չափի թերսպառումների միջավայրում, ռուսական ցորենի գինը նվազել է գրեթե 2 անգամ: Թեև վերջին տարիներին՝ 2018-2020 թթ., ցորենի գները որոշակիորեն վերականգնվել են, այնուամենայնիվ, դրանք դեռևս շարունակում են մնալ ցածր: Իսկ ռուսական ցորենի գնի փոփոխությունները, ինչպես արդեն նշել ենք, հիմնականում համընկնում են այլ՝ արտահանող երկրների գների փոփոխություններին:
6. Հայաստանի Հանրապետություն ցորենն ու այլուրը ներմուծվում են հիմնականում Ռուսաստանի Դաշնությունից: Վերջին՝ 2015-2020 թթ. ժամանակահատվածում, ՌԴ-ից ցորենի ներմուծման մասնաբաժինը կազմել է միջինը 90%, իսկ այլուրի ներմուծմանը՝ շուրջ 98-99%: Այսինքն, վստահաբար կարելի է պնդել, որ ՌԴ-ում ցորենի և այլուրի արտահանման գները հիմք են հանդիսանում ՀՀ-ում ցորենի և այլուրի գների ձևավորման համար և մեր հանրապետության նշված շուկաներում գնային տատանումները պայմանավորող էական գործոնը հենց ՌԴ արտահանման գների փոփոխություններն են, իհարկե՝ ճշգրտված ԱՄՆ դոլարի փոխարժեքով, քանի որ նշված ապրանքատեսակների ներմուծումը ՌԴ-ից իրականացվում է ԱՄՆ դոլարով:
7. Յորենի ձեռք բերումից մինչև ՀՀ-ում դրա պահեստ հասնելը ցորենի միջին գինը կազմում է շուրջ 240 ԱՄՆ դոլար, որի 80%-ը՝ ձեռք բերման, իսկ 20%-ը՝ փոխադրման ծախսերն են: Այլուրի արտադրության դեպքում ինքնարժեքն ունի հետևյալ կառուցվածքը. 86%՝ ցորենի արժեք, 5%՝ աշխատավարձ, 4%՝ վարչական ծախսեր, մնացած 5%՝ տարայի, եկամտային հարկի և այլ ծախսերի գումար: Դիտարկվող ժամանակահատվածում դանդաղ նվազել է վերադիրը՝ թողարկման շուկայական արժեքի և ինքնարժեքի միջև տարբերությունը, ինչը շուկա-

յական մրցակցության խորացման արդյունք է: Ամբողջ ժամանակահատվածի համար վերադիրը կազմում է շուրջ 7.5%: Ճիշտ է, որոշ ամիսներին վերադիրը նաև բացասական է ստացվում, սակայն պետք է հաշվի առնել, որ այստեղ կարող են անհամապատասխանություններ լինել թողարկման և իրացման ամիսների միջև (լազային էֆեկտներ):

8. ՀՀ-ում ցորենի ներքին գների վրա զգալի է ներմուծված ցորենի գների ազդեցությունը, քանի որ ներմուծվող ցորենի ինքնարժեքի (ինքնարժեքը՝ պահեստում) շուրջ 80%-ը կազմում է ցորենի ձեռք բերման գինը: Իր հերթին, այլուրի ինքնարժեքի 86%-ը կազմում է ցորենի արժեքը: Այսինքն, Հայաստանում սպառվող այլուրի ինքնարժեքի շուրջ 70%-ը կազմում է միջազգային շուկայում ցորենի ձեռք բերման գինը: Իհարկե, այս համամասնությունները որոշակիորոն փոխվում են, եթե դիտարկենք ոչ թե ցորենի և այլուրի ինքնարժեքները, այլ գները՝ պայմանավորված վերադիրների ավելացմամբ, սակայն այն շարունակում է մնալ բավական բարձր՝ կազմելով շուրջ 60%, ինչը հաստատվում է նաև ցորենի ներմուծմամբ ու այլուրի արտադրությամբ զբաղվող տնտեսավարող սուբյեկտների հարցման և երկու երկրների գների միջև կոռելյացիայի բարձր գործակիցների արդյունքներով:

### Օգտագործված գրականություն

1. ՄԱԿ-ի Պարենի և գյուղատնտեսության կազմակերպություն (FAO)՝ [http://www.fao.org/worldfoodsituation/csd/en/#:~:text=FAO's%20forecast%20for%20world%20wheat,of%20around%20765%20million%20tonnes,https://fpma.apps.fao.org/gIEWS/food-prices/tool/public/»fbclid=IwAR0XcZpJX\\_7o3J3ostw05mOTc5aZyU459Z\\_U3kFPjimMZx-L50ZX4tsWeM#dataset/international](http://www.fao.org/worldfoodsituation/csd/en/#:~:text=FAO's%20forecast%20for%20world%20wheat,of%20around%20765%20million%20tonnes,https://fpma.apps.fao.org/gIEWS/food-prices/tool/public/»fbclid=IwAR0XcZpJX_7o3J3ostw05mOTc5aZyU459Z_U3kFPjimMZx-L50ZX4tsWeM#dataset/international):
2. ՀՀ վիճակագրական կոմիտեի տվյալների բազաներ՝ [https://www.armstat.am /file/article/f\\_sec\\_4\\_2019\\_3..pdf](https://www.armstat.am /file/article/f_sec_4_2019_3..pdf):
3. Аварский Н., Пролыгина Н., Гасанова Х., Федюшин Д., Государственные интервенции как форма маркетингового регулирования рынка зерна // Экономика сельского хозяйства России, 2014.
4. Узун В.Я., Светлов Н.М., Шагайда Н.И., Логинова Д.А., Шишкина Е.А., Совершенствование механизмов государственного регулирования российского рынка зерна, «Российская академия народного хозяйства и государственной службы при президенте Российской Федерации», М., 2017.
5. Алтухов А., Система сбыта зерна как фактор становления развитого зернового рынка в России// Экономика сельского хозяйства России, Vol. 8, 2014.
6. Обзор рынка зерна в государствах-членах Евразийского экономического союза за 2010-2014 годы, Департамент агропромышленной политики, Евразийская экономическая комиссия, М., 2015.
7. Rezitis et al. Agricultural and Food Economics, 2015,

- [https://www.researchgate.net/publication/279222579\\_Investigating\\_the\\_international\\_prices\\_of\\_wheat\\_and\\_rice](https://www.researchgate.net/publication/279222579_Investigating_the_international_prices_of_wheat_and_rice).
8. Troester B., Staritz C., Fundamentals or Financialisation of Commodity Markets: What Determines Recent Wheat Prices, Austrian Foundation for Development Research (ÖFSE) Working Paper N43, 2013, <https://www.econstor.eu/bitstream/10419/98786/1/774882611.pdf>.
  9. Harvey A., Koopman S.J., Unobserved Components Models in Economics and Finance, IEEE Control Systems Magazine, Vol. 29, Issue 6, Dec. 2009), DOI: 10.1109/MCS.2009.934465, <https://ieeexplore.ieee.org/document/5338563>.
  10. Janzen J. P., Carter C. A., Smith A. D., Adjemian M. K., Deconstructing Wheat Price Spikes: A Model of Supply and Demand, Financial Speculation, and Commodity Price Comovement, Economic Research Service, Economic Research Report Number 165 (April 2014), [https://www.ers.usda.gov/webdocs/publications/45199/46439\\_err165.pdf»v=0](https://www.ers.usda.gov/webdocs/publications/45199/46439_err165.pdf?v=0).

#### **ТАТУЛ МКРТЧЯН**

*Проректор по науке АГЭУ,  
доктор экономических наук, доцент*

#### **МЕЛАНЯ КАРАГЕЗЯН**

*Преподаватель кафедры макроэкономики АГЭУ*

#### **ВАЗГЕН ПОГОСЯН**

*Экономист департамента денежно-кредитной политики  
Центрального банка Армении,  
аспирант кафедры макроэкономики АГЭУ*

***Факторы, определяющие изменение мировых цен на пшеницу и их влияние на рынки пшеницы и муки в Республике Армения.***– Республика Армения, являясь маленькой страной с открытой экономикой, как и большинство стран мира, на мировых товарных рынках принимает мировые цены как эндогенные переменные, не имея влияния на спрос и предложение на них. Это также относится и к такому товару как пшеница, внутреннее потребление которой в Республике Армения в значительной степени удовлетворяется за счет импорта. В связи с этим обстоятельством объективной необходимостью для Республики Армения является исследование тенденций развития международных рынков пшеницы и колебания цен на них, как основного компонента внутренней цены пшеницы, а следовательно, стоимости муки и хлеба в РА, поскольку изменения мировых цен пшеницы определяют размер и направленность изменений внутренних цен на них.

**Ключевые слова:** импорт пшеницы, местное производство, мировые цены, самообеспеченность, мировые запасы пшеницы, себестоимость и цена муки.

JEL: D24, E39

**TATUL MKRTCHYAN**

*Vice-rector for Science of ASUE,  
Doctor of Economics, Associate Professor*

**MELANYA KARAGEZYAN**

*Lecturer at the Chair of Macroeconomics at ASUE*

**VAZGEN POGOSYAN**

*Economist of the Department of Monetary Policy of the Central Bank of Armenia,  
PhD Student at the Chair of Macroeconomics at ASUE*

***Factors Determining Changes in World Wheat Prices and Their Impact on Wheat and Flour Markets in the Republic of Armenia.***–

The Republic of Armenia, being a small open economy like most countries in the world accepts world prices as endogenous variables in the world commodity markets, having no influence on supply and demand for them. This also applies to such commodities as wheat, the domestic consumption of which in the Republic of Armenia is largely satisfied by imports. In this regard, an objective necessity for the Republic of Armenia is to study trends in the development of international wheat markets and fluctuations in prices for them as the main component of the domestic price of wheat, and, consequently, flour and bread in the Republic of Armenia, since changes in world prices of wheat determine the size and the direction of changes in domestic prices for them.

**Key words:** *wheat imports, local production, world prices, self-sufficiency, world wheat reserves, cost and price of flour.*

JEL: D24, E39